

ւանեցին¹, զոր և մեծապէս կը յարգէր և յա-
նախ անոր օգնութեան կը կարօտէր Գրիգոր
Բ Վկայատիրի հայրն՝ Գրիգոր Մագիստրոս.
լսենք ահա թէ ինչ կը գրէր սա առ նա.
« Զինչ արդեօք հզօրդ հոնտոր և աստուա-
ծային տաշեախն. մի և ասեցեալք ի գիր ի
մէնջ կամ թէ արհամարհեալ. զի միանգամ
և երկիցս ոչ տաս պատասխանի, որ միշտ
կարօտեալ եմ բանի քում և գրի. քանզի
հզօր ես ի պուստիկոսական մատենագրու-
թեան. և սիրելի ինձ ոչ այլ ինչ՝ եթէ ոչ
այնպիսի ինչ լռել կամ տաշել: Դարձեալ,
ուրիշ թղթի մը մէջ ալ կ'ըսէ. « Կարօտիմք
քեզ՝ մերձ ելոյ մեզ օգնականութեան այս-
պիսում իրողութեանց, ապա թէ ոչ՝ աղօթիւք
օգնեսցես մեզ »: Արդ, Գրիգոր Մագիստրոս
սի այսբան համարման արժանացած դիտ-
նական տնձ մի անտարակոյս մեծարելի եւ
դած է նաեւ յաշտ իւր որդւոյն, որ և իւր
հօրը մահուանէն ետեւ տարի վերջ կաթո-
ղիկոսական դահլին վրայ բազմելով, անշուշտ
մերթ ընդ մերթ վերոյիշեալ հարցման նման՝
իւր ուրիշ գիտական տարակոյսներն եւս կը
հարցընէր այդ գիտնական անձինք:

Ի Տօնապատմաւս կը գտնուի նաեւ, ինչ-
պէս ըսինք, համառօտ քանք ինչ ի Յարու-
թիւնն Գրիստոսի, որոյ վերնադիրն է. « Սա-
կա պատմաւ Յարութեան Տեան՝ ի Սրբէ
(այսինքն ի Սարգսէ) հաւաքեալ և եղեալ ».
կրնանք ըսել, թէ անշուշտ համառօտ գրուածք
մ'է այս, յորում չի նշմարուիր լեզուի կամ
իմաստից մասնաւոր յատկանիշ մը, որով
կարելի լինի ընծայել զայն Սարգսի Ծնոր-
հալոյ կամ ոչ. սակայն հաւանական կ'ե-
րեմի, թէ անելի ուրիշ համանուն հեղինակի
հաւաքածոյ զորք ըլլալու է այդ, քան թէ
իրեն:

Սարսափելի որոտմամբ բաւերով սկսող
հանգստեան շարականի տուններուն սկզբնա-

տաքն եւս կը յօգնէ Սարգիս անունը. նոյն
է արդեօք այդ Սարգիսն: Որչափ որ այդ
շարականի գեղեցկահիւս յորինուածն և ըն-
տիր լեզուն, շատ վերջին դարուց հեղինակ
մի շերեւցունէր զՍարգիսոյ, սակայն դարմա-
նալի է որ այդ շարականը կը պակսի գրեթէ
մինչեւ շորեքտասներորդ դար գրուած շա-
րակնոցաց մէջ, և նոյն իսկ մեր ձեռագրա-
տան ամենէն ընտիր և հին երկու շարա-
կանաց մէջ անգամ կը պակսի, յորոց մին
գրուած է յամին 1287, և միւսն 1295,
որ է շարականին Հիթմոյ Բ արքային. իսկ
յետագայ դարուց շարականաց մի քանի օ-
րինական մէջ ալ վերջը գրուած կը գտնեմք,
որով և կը ստիպուինք մենք յետին դարուց
հեղինակի մը զորք համարել զայն՝ ի ժամա-
նակս կիրիկեցոց: Ի ձեռագիրս կը յիշա-
տակուի Սարգիս ոմն երգաբան՝ գրիչ կոչուած,
որոյ անուամբ կը գտնուին նաեւ տաղք և
գանձք, գուցէ սա լինի յօրինող և վերոյիշ-
եալ շարականին, թէպէտեւ յայտնի չէ մեզ
յիշեալ հեղինակիս որ դարու մէջ ապրած
լինելն:

Հ. ԵՓԵՍ ՅԱՐԱԼԱՄԵԱՆ

ՀՕՐԸ ՏԱՐԻՔԸ

« Քամի՛ տարուամ ես, հայր: — Երուտ և անկի:
— Երուտ տարի՛:

Ո՛հ, լըրացմաւ կիւմըդ այմ ատեմ:

— Ի՞նչպէս, մեռցմե՛ն կ'ուզես դու զիս:

Շարունակուի պիտի կարծեմ:

— Ո՛րչափ ատեմ, — Որչափ ատեմ որ պէտք ունիս
Դու Ռօր, որչափ որ փոքրիկ ես:
Աւելցուց այմ ամուշ մամկիկ.

« Գլմա համգիստ եղիր, հայրիկ,

Պը մեծմամ ես քիչ ատեմէմ »:

Հայրը զըրկեց ծագուկմ իրեմ:

ՔԳԳ. Հ. ՅՐՄԵՆ ԴԱՋԻԿԵԱՆ

1. Որչափ որ այս գրուածոյս վերնագրէն դա-
տեալ՝ կ'ըսենք, թէ զորս հեղինակն հաւանա-
բէն Աեւանեցին է, սակայն միանգամայն նշմա-
րելով այդ գրուածոյն մէջ փոքրիկ կտոր մ'այլ
ուրիշ գրուածքէ մը քաբա մէջ մտած, այնու-

հետեւ չենք կարող բուրոյթին ապահով ըլլալ
յիշեալ գրուածոյս առանց խանգարուելու մեր
ձեռքը հասած լինելուն վրայ: և հետեւաբար
չենք կրնար դորս մէջ պարունակուած ամեն գա-
ղափարաց ալ հեղինակ ճանչնալ զԱեւանեցին: